ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.11.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/244

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.11.2020թ. թիվ 26/26-1/16992-2020 գրությամբ «Բլամմո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ դատական դեպարտամենտի 09.11.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-7663 գրության հիման վրա 16.11.2020թ. թիվ 26/26-1/16992-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Բլամմո» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բլամմո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բլամմո» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Բլամմո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/244 ընթացակարգի շրջանակներում 20.11.2020թ. ժամը 10:35-ին և 30.11.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.11.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-7663 գրությամբ հայտնել է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ ներկայացնում է ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Բլամմո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/244 ընթացակարգի շրջանակներում 20.11.2020թ. ժամը 10:35-ին և 30.11.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/244 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/244 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատական դեպարտամենտի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև 30.07.2020թ. կնքվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Բլամմո» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 40 հատ «Տնտեսող լամպ» ապրանքատեսակի մատակարարումը պետք է իրականացվի Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

3. «Բլամմո» ՍՊԸ-ին ուղղված 12.10.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-7095 գրությամբ՝ ՀՀ դատական դեպարտամենտը հայտնել է հետևյալը. «Սույն թվականի հուլիսի 30-ին Դատական դեպարտամենտի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքի մատակարարման թիվ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29-1 պայմանագիրը, ըստ որի Վաճառողը պարտավորվել է Գնորդին մատակարարել 40 հատ առաստաղի LED լուսատուներ: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 31.07.2020թ.-ին: Նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքի մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի օգոստոսի 29-ը (Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը մինչ օրս չի կատարել Պայմանագրի 2.4.1-րդ կետով սահմանված պարտավորությունը, այն է՝ «Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով», ինչպես նաև Գնորդին չի ներկայացվել որևէ փաստարկ՝ վերը նշված պարտավորությունը չկատարելը հարգելի համարելու մասին, այնուամենայնիվ Վաճառողի կողմից Պայմանագրով սահմանված տվյալ պարտավորության խախտումը Գնորդն այս պահին չի համարում էական, քանի որ Գնորդի մոտ չի վերացել տվյալ ապրանքի օգտագործման պահանջը և հիմք ընդունելով կողմերի միջև կնքված Պայմանագրի 2.1.5-րդ կետը՝ Դատական դեպարտամենտը սահմանում է նոր ողջամիտ ժամկետ՝ սույն ծանուցումն ստանալուց հետո 10 օրացուցային օր, ապրանքի մատակարարման համար:

Ընդ որում հարկ եմ համարում հիշեցնել նաև, որ վերոնշյալ Պայմանագրով Վաճառողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, Գնորդը միջոցներ կձեռնարկի ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման համար»:

4. «Բլամմո» ՍՊԸ-ին ուղղված 30.10.2020թ. թիվ ԴԴ-1-Ե-7556 ծանուցմամբ ՀՀ դատական դեպարտամենտը հայտնել է հետևյալը. «Սույն թվականի հուլիսի 30-ին Դատական դեպարտամենտի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքի մատակարարման թիվ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29-1 պայմանագիրը, ըստ որի Վաճառողը պարտավորվել է Գնորդին մատակարարել 40 հատ առաստաղի LED լուսատուներ: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 31.07.2020թ.-ին: Նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր՝ գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքի մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի օգոստոսի 29-ը (Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.1-րդ կետով սահմանված պարտավորությունը՝ այն է. «Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով» և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5-րդ կետը՝ 2020 թվականի հոկտեմբերի 12-ին Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի՝ Վաճառողին ուղղված թիվ ԴԴ-3-Ե-7095 գրությամբ սահմանվել է ապրանքի մատակարարման նոր ժամկետ (10 օրացուցային օր): Վերը նշված գրությունը նույն օրը՝ 12.10.2020թ., ուղարկվել է վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին: Բացի այդ, հիշյալ գրությունը փոստային առաքման ծառայության միջոցով ուղարկվել է նաև Վաճառողի հասցեով: Սակայն, մինչ օրս, Վաճառողի կողմից չի կատարվել որևէ փաստարկ՝ վերը նշված ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելը հարգելի համարելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Վաճառողի կողմից խախտվել են Պայմանագրի, ինչպես նաև 2.4.1-րդ կետով, այնպես էլ 2.4.2-րդ կետով սահմանված պարտավորությունները:

Համաձայն Պայմանագրրի 2.1.1-րդ կետի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառոի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Պայմանագրի 2.1.7-րդ կետով սահմանված է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, իսկ 2.1.7.1-րդ կետի բ) պարբերության համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ և 2.4.5-րդ կետերով սահմանված

պարտավորությունները և ղեկավարվելով պայմանագրի 2.1.4-րդ կետի բ) ենթակետի, 2.1.7-րդ կետի և 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետի, պահանջներով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

- միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը,
- ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ,
- հիշեցնում է, որ պատասխանատվություն եք կրում Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 02.11.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2020թ. թիվ 26/26-1/16992-2020 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 09.11.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-7663 գրությունը և կից փաստաթղթերը, գործում առկա փաստթաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Պայմանագրի 8-րդ կետերի 8.1-րդ ենթակետերի՝ ***<u>Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:</u>***

Այսպիսով՝ ՀՀ Դատական դեպարտամենտի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև 30.07.2020թ. կնքվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Բլամմո» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 40 հատ «Տնտեսող լամպ» ապրանքատեսակի մատակարարումը պետք է իրականացվի Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

«Բլամմո» ՍՊԸ-ին ուղղված 12.10.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-7095 գրությամբ ՀՀ դատական դեպարտամենտը հայտնել է հետևյալը. «Սույն թվականի հուլիսի 30-ին Դատական դեպարտամենտի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքի մատակարարման թիվ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29-1 պայմանագիրը, ըստ որի Վաճառողը պարտավորվել է Գնորդին մատակարարել 40 հատ առաստաղի LED լուսատուներ: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 31.07.2020թ.-ին: Նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր՝ գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքի

մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի օգոստոսի 29-ը (Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը մինչ օրս չի կատարել Պայմանագրի 2.4.1-րդ կետով սահմանված պարտավորությունը, այն է՝ «Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով», ինչպես նաև Գնորդին չի ներկայացվել որևէ փաստարկ՝ վերը նշված պարտավորությունը չկատարելը հարգելի համարելու մասին, այնուամենայնիվ Վաճառողի կողմից Պայմանագրով սահմանված տվյալ պարտավորության խախտումը Գնորդն այս պահին չի համարում էական, քանի որ Գնորդի մոտ չի վերացել տվյալ ապրանքի օգտագործման պահանջը և հիմք ընդունելով կողմերի միջև կնքված Պայմանագրի 2.1.5-րդ կետը՝ Դատական դեպարտամենտը սահմանում է նոր ողջամիտ ժամկետ՝ սույն ծանուցումն ստանալուց հետո 10 օրացուցային օր, ապրանքի մատակարարման համար:

Ընդ որում հարկ եմ համարում հիշեցնել նաև, որ վերոնշյալ Պայմանագրով Վաճառողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, Գնորդը միջոցներ կձեռնարկի ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման համար»:

«Բլամմո» ՍՊԸ-ին ուղղված 30.10.2020թ. թիվ ԴԴ-1-Ե-7556 ծանուցմամբ ՀՀ դատական դեպարտամենտը հայտնել է հետևյալը. «Սույն թվականի հուլիսի 30-ին Դատական դեպարտամենտի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքի մատակարարման թիվ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29-1 պայմանագիրը, ըստ որի Վաճառողը պարտավորվել է Գնորդին մատակարարել 40 հատ առաստաղի LED լուսատուներ: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 31.07.2020թ.-ին: Նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր՝ գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքի մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի օգոստոսի 29-ը (Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.1-րդ կետով սահմանված պարտավորությունը՝ այն է. «Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով» և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5-րդ կետը՝ 2020 թվականի հոկտեմբերի 12-ին Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի՝ Վաճառողին ուղղված թիվ ԴԴ-3-Ե-7095 գրությամբ սահմանվել է ապրանքի մատակարարման նոր ժամկետ (10 օրացուցային օր):

Վերը նշված գրությունը նույն օրը՝ 12.10.2020թ., ուղարկվել է վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին: Բացի այդ, հիշյալ գրությունը փոստային առաքման ծառայության միջոցով ուղարկվել է նաև Վաճառողի հասցեով: Սակայն, մինչ օրս, Վաճառողի կողմից չի կատարվել որևէ փաստարկ՝ վերը նշված ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելը հարգելի համարելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Վաճառողի կողմից խախտվել են Պայմանագրի, ինչպես նաև 2.4.1-րդ կետով, այնպես էլ 2.4.2-րդ կետով սահմանված պարտավորությունները:

Համաձայն Պայմանագրրի 2.1.1-րդ կետի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառոի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Պայմանագրի 2.1.7-րդ կետով սահմանված է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, իսկ 2.1.7.1-րդ կետի բ) պարբերության համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ և 2.4.5-րդ կետերով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով պայմանագրի 2.1.4-րդ կետի բ) ենթակետի, 2.1.7-րդ կետի և 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետի, պահանջներով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

- միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը,
- ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ,
- հիշեցնում է, որ պատասխանատվություն եք կրում Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 02.11.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>15 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ «Բլամմո» ՍՊԸ-ն իր և ՀՀ դատական դեպարտամենտի միջև 30.07.2020թ. կնքված Պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում՝ 2020 թվականի օգոստոսի 29-ը, 40 հատ առաստաղի LED լուսատուներ ՀՀ դատական դեպարտամենտին մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ Ընկերությունը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 02.11.2020թ., ընդհանրապես չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը՝ ապրանքի մատակարարման ժամկետը խախտելով 15 օրից ավելի ժամկետով, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.11.2020թ. թիվ 26/26-1/16992-2020 գրությամբ «Բլամմո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Բլամմո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**